ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/78

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի կողմից 25.07.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/78 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 25.07.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝

Ընթացակարգ): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 17.06.2018թ. ընդունվել է որոշում, որով հաղթող է ճանաչվել նմանատիպ փորձ չունեցող ընկերություն: Ըստ Ընթացակարգի հրավերի 2.5 կետի՝ մասնակցին ներկայացվող «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայ-տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մետաղական կայմերի և աշտարակների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքները:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Ընկերության կարծիքով մասնակից «Պրոթերմ» ՍՊԸ-ն չի կարող 5-8 մետր բարձրության վրա կատարած աշխատանքներից հետո իրականացնել նույնը 308 մ բարձրության վրա, երբ նախահաշվային արժեքի 15 տոկոսի չափով է կատարվածը: Ընկերության կարծիքով դա չի կարող համարվել փորձ և դիտարկվել որպես նմանատիպ աշխատանք:

«Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ն 2017թ. իրականացրել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի Քանաքեռի ռադիոհսկման մասնճյուղում գտնվող մետաղական աշտարակի (H=152 մ) և Նուբարաշենի ռադիոհսկման մասնաճյուղում գտնվող մետաղական աշտարակի (H=57,5 մ) մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, վերանորոգման և ներկման աշխատանքները, նույն նախարարության պատվերով բազմաթիվ կամուրջների տարբեր բարձրությունների վրա գտնվող նմանատիպ աշխատանքները:

Ընկերությունը խնդրել է քննարկել «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի բողոքը «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 17.07.2018թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշման դեմ և կայացնել արդար որոշում:

Ի լրումն բողոքի 01.08.2018թ. ներկայացված գրությամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 06.07.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 5.2 կետի համաձայն, որոշել է՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «Պրոթերմ» ՍՊ և «Մոնտաժտրանսշին» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար և 1 չափաբաժնով ճանաչել.

- «Պրոթերմ» ՍՊԸ-ն՝ առաջին տեղը,
- «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ին՝ երկրորդ տեղը զբաղեցրած մասնակիցներ:

Նույն արձանագրության 5.4 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 13.07.2018թ.

ժամը 15:00 ներկայացնել Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, նախկինում կատարած պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից պահանջված բոլոր փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացվել է:

Իսկ նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար և «Պրոթերմ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետը, Ընթացակարգի Հրավերի 2.5 կետը:

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 4 արձանագրության 3.1 կետի համաձայն գնահատվել են բավարար և դա այն դեպքում, երբ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

-աղազրկված ջրի պահեստային բաքերի ներքին մակերեսների հակակոռոզիոն շերտի նորոգման աշխատանքներ,

-էլեկտրական արտադրամասի բաց բաշխիչ սարքավորումների հակակոռոզիոն շերտի նորոգման աշխատանքներ,

-ՄԱՌՓ-85 օբյեկտի մակնիշավորման վերանորոգման աշխատանքներ, շոգեգեներատորների իրանի արտաքին մակերեսի և հենակների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքներ,

-պարագծի ներքին կենսական կարևոր գոտիներում տեղակայված մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքներ:

Ինչպես երևում է վերոնշված փաստերից՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ն ներկայացրել է հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքների պայմանագրեր, այնինչ պետք էր ներկայացվեր հրավերով նախատեսված՝ մետաղական կայմերի և աշտարակների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքները:

Մեր կարծիքով, հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքներ կատարած ընկերությունը չի կարող կատարել 308 մ. բարձրություն ունեցող աշտարակի ներկում, այն պարզ պատճառով, որ երբևէ չի արել այդպիսի աշխատանք:

Ընկերությունը 30.07.2018թ. փաստաթղթերի պահանջի դիմում է ներկայացրել «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին, որով խնդրել էր ներկայացնել Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչված՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը:

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից թերի է ներկայացվել նաև կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք՝ Հավելված 5.2, որտեղ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է միայն Հավելված 5.2 և աշխատակիցների համաձայնագրերը, և այլևս ոչ մի փաստաթուղթ, այնինչ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանվել է, որ՝

- Կից ներկայացվում է սույն տեղեկանքում նշված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները (կցվում է):

Ավելին՝ Ընթացակարգի հրավերի 2.5 կետի 4 ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների

կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» համապատասխան վկայականի բնօրինակը և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանք, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով...:

Իսկ նույն ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Մինչդեռ ինչպես պարզ է դառնում, Հրավերով պահանջված թվարկված փաստաթղթերը «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել:

Ընկերությունը խնդրել է դադարեցնել «ՀՀՌՑ-ԲԸԱՇՁԲ-18/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար գնահատելու, ինչպես նաև «Պրոթերմ» ՍՊԸ-ին ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը 02.08.2018թ. գրությամբ հայտնել է, որ 01.08.2018թ. «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից ներկայացված բողոքի լրացումով անդրադարձ է կատարվել նաև «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 5.2 թերի ներկայացնելու փաստին, ինչին ի պատասխան՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հակադարձեցին և հայտնեցին, որ «2018թ. հուլիսի 29-ին նիստին մասնակից չէր ներկայացել, այդ իսկ պատճառով նիստը տեղի է ունեցել 2018թ. հուլիսի 30-ին և ներկայացվել են բոլոր պակաս փաստաթղթերը»:

Վերոնշվածի վերաբերյալ Ընկերության կողմից կատարվել է ուսումնասիրություն, որի ընթացքում պարզվել է, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին են ներկայացրել կեղծ տվյալներ, այսպես՝

Համաձայն gnumner.am կայքում հրապարակված արձանագրությունների Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 06.07.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած

նիստի թիվ 3 արձանագրության 5.2 կետի համաձայն, որոշել է «Պրոթերմ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ նույն արձանագրության 5.4 կետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 13.07.2018թ. ժամը 15:00 ներկայացնել Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, նախկինում կատարած պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից պահանջված բոլոր փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացվել և նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար և «Պրոթերմ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Նույն gnumner.am կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն 2018թ. հուլիսի 17-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը:

Այսինքն, այս դեպքում որևէ ամսվա (թե՛ հունիս, և թե՛ հուլիս) 29-ին կամ 30-ին կայացած նիստին լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու կամ ներկայացնելու մասին խոսք անգամ չի կարող լինել այն պարզ պատճառով, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ն, համաձայն 06.07.2018թ. արձանագրության, որակավորման փաստաթղթերը պարտավոր էր ներկայացնել մինչև 13.07.2018թ. ժամը 15:00 և որ 17.07.2018թ. արձանագրությամբ «Պրոթերմ» ՍՊԸ-ն արդեն իսկ ճանաչվել էր ընտրված (հաղթող) մասնակից: Եվ ավելին, 2018թ. հուլիսի 17-ին արդեն իսկ հայտարարվել է անգործության ժամկետ:

Սակայն Պատվիրատուի և «Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները պնդում են, որ հուլիսի 30-ին ընկերությունը ներկայացրել է Հավելված 5.2-ով պահանջվող փաստաթղթերը, այս դեպքում հարց է առաջանում, թե ինչպես է պատահել, որ

«Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել 25.07.2018թ. (անգործության ժամկետի ընթացքում), երբ արդեն իսկ 17.07.2018թ. գնահատվել է «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման բոլոր փաստաթղթերը և չի արձանագրվել շտկման ենթակա որևէ փաստաթուղթ և միայն «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի կողմից 30.07.2018թ. փաստաթղթերի պահանջի դիմում ներկայացնելու օրը «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն որոշել է առաջարկել «Պրոթերմ» ՍՊԸ-ին ներկայացնել փաստաթղթեր, այն էլ անգործության ժամկետի փուլում՝ չդադարեցնելով պայմանագիր կնքելու որոշումը, ինչը հանդիսանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում:

Ավելին, 01.08.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ներկայացուցիչը նշել է նաև այն փաստը, որ 30.07.2018թ. ներկայացված դիմումի համաձայն՝ Հավելված 5.2 սահմանված որոշակի փաստաթղթեր «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ին չի ներկայացվել, սակայն այդ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ի հավաստումն, որ այդ փաստաթղթերը առկա են:

Վերոնշված հանգամանքի վերաբերյալ Ընկերությունը հայտնել է, որ «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի կողմից 30.07.2018թ. փաստաթղթերի պահանջի դիմում ներկայացնելու օրը կցվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կ. Թամազյանի պարզաբանումը, որը կարծես թե «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից չի ուսումնասիրվել կամ անտեսվել է և այդ իսկ պատճառով դիմումով պահանջած փաստաթղթերը ներկայացվել են թերի կամ այդ պահին են նկատել որակավորումը հիմնավորող մի շարք փաստաթղթերի բացակայությունը:

Ընկերության կարծիքով՝ «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի կողմից 25.07.2018թ. բողոք ներկայացնելու օրը միայն «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն կատարել է փաստաթղթերի ուսումնասիրություն և բացահայտելով թերի փաստաթղթերը, առաջարկել է վերացնել անհամապատասխանությունները և դա այն դեպքում, երբ Ընթացակարգը գտնվում է անգործության ժամկետի փուլում:

Տվյալ պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր ոչ թե գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ անգործության փուլում

շտկեր առկա թերի փաստաթղթերը, այլ պետք է դադարեցներ 17.07.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3.1 կետով կայացրած որոշումները՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ին ներկայացված փաստաթղթերը բավարար գնահատելու, Ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ, և վերադառնալով գնահատման փուլ՝ հնարավորություն ընձեռներ «Պրոթերմ» ՍՊԸ-ին՝ շտկելու թերի ներկայացված փաստաղթղերը:

Ընկերությունը գտնում է, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը և ներկայացված նմանատիպ պայմանագրերը, և Հավելված 5.2-ը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել և գնահատվել են բավարար գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտումներով, որոնք ի հայտ են եկել միայն «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի կողմից բողոք ներկայացնելուց հետո:

Ընթացակարգի Հրավերի 2.5 կետի համաձայն՝ Մասնակցին ներկայացվող

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մետաղական կայմերի և աշտարակների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքները:

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 4 արձանագրության 3.1 կետի

համաձայն գնահատվել է բավարար և դա այն դեպքում, երբ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

-աղազրկված ջրի պահեստային բաքերի ներքին մակերեսների հակակոռոզիոն շերտի նորոգման աշխատանքներ,

-էլեկտրական արտադրամասի բաց բաշխիչ սարքավորումների հակակոռոզիոն շերտի նորոգման աշխատանքներ,

-ՄԱՌՓ-85 օբյեկտի մակնիշավորման վերանորոգման աշխատանքներ, շոգեգեներատորների իրանի արտաքին մակերեսի և հենակների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքներ,

-պարագծի ներքին կենսական կարևոր գոտիներում տեղակայված մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքներ:

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերով նախատեսված և հրավերով պահանջվող աշխատանքների ուսումնասիրությունից և համեմատությունից ակնհայտ է դառնում, որ նախկինում կատարված աշխատանքները չեն կարող դիտարկվել համանման այն պարզ պատճառով, որ Հրավերով որպես նմանատիպ հստակ պահանջվել են մետաղական կայմերի և աշտարակների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքներ, որը իրականացվում է «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» համապատասխան վկայական ունեցող աշխատակիցների կողմից և այն չի կարող նույնականացվել ջրի պահեստային բաքերի, էլեկտրական արտադրամասի բաց բաշխիչ սարքավորումների կամ էլեկտրական արտադրամասի բաց բաշխիչ սարքավորումների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքների հետ, քանզի վերջիններս չեն հանդիսանում մետաղական կայմեր, աշտարակներ կամ նմանատիպ ինժեներական կառույցներ:

Ընկերության կարծիքով, նման օբյեկտների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքներ կատարած ընկերությունը չունի բավարար մասնագիտական փորձառություն կատարելու 308 մ. բարձրություն ունեցող աշտարակի ներկում, այն պարզ պատճառով, որ երբևէ չի արել այդպիսի աշխատանք:

Ընկերությունը գտնում է, որ հենց այս հիմնավորմամաբ նույնպես «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չպետք է գնահատվեին Ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող:

Ելնելով վերոգրյալից՝ «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է Ընկերության կողմից 25.07.2018թ. ներկայացված բողոքը բավարարել:

«Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.07.2018թ. ժամը 10:30-ին և 01.08.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 01.08.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ դիրքորոշումը:

2. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.07.2018թ. թիվ 31-419 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվել և գնահատվել է հետևյալ կարգով.

Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագրերը գնահատվում են նմանատիպ, եթե դրանց շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը կամ հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայ-տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվել մետաղական կայմերի և աշտարակների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքները:

Հաշվի առնելով, որ Երևանի հեռուստաաշտարակը առանձնահատուկ ինժեներական կառույց է, հանրապետությունում առկա նմանատիպ այլ կառույցները (180մ) ևս հիմնականում պատկանում են ՀՀՌՑ-ին, իսկ դրանց հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի մասնակի վերականգնման աշխատանքներն իրականացվել են ՀՀՌՑ-ի ուժերով ու միջոցներով, ուստի նախկինում կատարված ներկման աշխատանքների նմանատիպությունը, մասնակիցներ ներգրավելու և մրցակցային դաշտն ընդլայնելու նպատակով, սահմանվել է առանց բարձրություն նշելու:

Առաջին տեղը զբաղեցրած «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար, քանի որ վերջինիս ներկայացրած՝ նախկինում կատարված պայմանագրերով հիմնականում կատարվել են հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման աշխատանքներ, ինչն արտացոլված է գնումների միասնական անվանացանկի 45441160 (հակակոռոզիոն ծածկույթների կիրառման աշխատանքներ) միջանցիկ ծածկագրով՝ CPV, որը փոխկապակցված է գնման առարկա հանդիսացող աշխատանքի անվանման հետ:

Հարկ է նշել, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերով կատարվել են ինժեներական կառույցների, այդ թվում՝ մետաղական բաքերի, բաց բաշխիչ սարքավորումների, շոգեգեներատորների իրանի արտաքին մակերեսի և հենակների հակառոզիոն շերտի վերականգնման և նորոգման աշխատանքներ:

Ըստ այդմ, «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը Պատվիրատուն համարում է չհիմնավորված:

Պատվիրատուն 07.08.2018թ. թիվ 31-453 գրությամբ հայտնել է նաև, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը շտկելու մասով.

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հրավիրած 1-ին նիստը կայացել է 30.07.2018թ., այլ ոչ 29.07.2018թ. (ոչ աշխատանքային օր), ինչպես նշել է բողոքաբեր Ընկերության ներկայացուցիչը, իսկ չի կայացել բողոքաբերի բացակայության պատճառով:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 5.2 կետով «Պրոթերմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից և նույն արձանագրության 5.4 կետով մասնակցից պահանջվել է մինչև 13.07.2018թ. ժամը 15:00-ն ներկայացնել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում և ամբողջական, ըստ որի գնահատող հանձնաժողովը 17.07.2018թ. կայացած նիստով մասնակցին ճանաչել է ընտրված մասնակից: Վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշման ու անգործության ժամկետի վերաբերյալ հայտարարությունները gnumner.am կայքում հրապարակվել են գնումների օրենսդրությանը համապատասխան, նիստին հաջորդող աշխատանքային օրը՝ 18.07.2018թ. («Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 10, 1-ին մաս) և ոչ թե 17.07.2018թ. ինչպես նշել է Ներկայացուցիչը (կայքից քաղվածքը կցվում է): Ներկայացված փաստաթղթերի շտկման կարիք չի եղել և մասնակցին նման պահանջ չի ներկայացվել:

3. ՀՀՌՑ-ն և «Պրոթերմ» ՍՊԸ-ն նշել են, որ 30.07.2018թ. որակավորման փաստաթղթերը ՀՀՌՑ-ի կողմից ներկայացվել են բողոքը քննող անձին՝ վերջինիս պահանջով, իսկ գնահատող հանձնաժողովին որակավորման փաստաթղթերը ներկայացվել են գնումների օրենսդրությամբ սահմանված և ընթացակարգի թիվ 3 արձանագրությամբ պահանջված ժամկետում, այն է՝ մինչև 13.07.2018թ., (հիմնավորումները կցվում են):

Եթե Ներկայացուցիչը ավելի ուշադիր զններ կայքը, ապա կհամոզվեր, որ գործընթացի բոլոր ժամկետները պահպանված են ու կայքում տեսանելի, և իրականությանը չհամապատասխանող ու անհիմն կարծիք չէր ներկայացնի:

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագրերի մասով որևէ նոր հանգամանք չի նշվել:

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից նախկինում կատարված պայմանագրերի և նմանատիպության հարցը քննարկվել և հիմնավորումները ներկայացվել են բողոքը քննող անձի 01.08.2018թ. նիստում՝ բոլոր շահագրգիռ կողմերի ներկայությամբ:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.07.2018թ. ժամը 10:30-ին և 01.08.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Պրոթերմ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30.07.2018թ. ԳԲԽ-ԱՄ-2018/78 միջանկյալ որոշմամբ գործով ներգրավվել է որպես երրորդ անձ:

«Պրոթերմ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.08.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀՀՌՑ-ԲԲԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն, «Պրոթերմ» ՍՊԸ-ն և «Մոնտաժտրանսշին» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 2018թ. հուլիսի 17-ի թիվ 4 արձանագրությամբ մրցույթում ընտրված մասնակից է ճանաչվել «Պրոթերմ» ՍՊԸ-ն և հայտարարվել է պայմանագիր կնքելու որոշման և անգործության ժամկետի մասին:

«Պրոթերմ» ՍՊԸ-ն գտնում է, որ «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված բողոքում նշել է, մեջբերում. «Ընկերությունը մեր կարծիքով չի կարող 5-8 մետր բարձրության վրա կատարած աշխատանքներից հետո իրականացնել նույնը 308մ բարձրության վրա, երբ

նախահաշվային արժեքի 15%-ի չափով է կատարվածը: Մեր կարծիքով դա չի կարող համարվել փորձ և դիտարկվել որպես նմանատիպ աշխատանք»:

Աշխատանքի կատարելու հնարավորությունը դա փորձառության չափանիշն է, որը գնահատման կարգը սահմանված է իրավական ակտերով:

Մասնավորապես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 61-րդ կետի 1-ին ենթակետի՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

ՀՀ կառավարության որոշման 65-րդ կետի՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: .... Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվիրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված պահանջի լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը հետևում է, որ մասնակիցը, որպեսզի բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, որի մեջ ներառված է նաև «Մասնագիտական փորձառություն» չափանիշը, անհրաժեշտ է որպեսզի վերջինս հայտով ներկայացնի հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Ընդ որում գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մետաղական կայմերի և աշխատարկների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքները:

Համաձայն Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Տվյալ դեպքում «Պրոթերմ» ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԱՔԴ/2539/02/17 քաղաքացիական գործով կայացրել է վճիռ, որում նշել է՝ ինչ վերաբերում է պատասխանող կողմի առարկության այն պատճառաբանությանը, որ ներկայացված պայմանագիրը չի կարող գնահատվել որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր, քանի որ նշված պայմանագրով սահմանված ապրանքները հանդիսանում են հրավերով պահանջվող անկողնային պարագաների և սպիտակեղենի հումք, այլ ոչ թե մատակարարված նմանատիպ ապրանքներ, ապա Դատարանը գտնում է, որ այն անհիմն է, նկատի ունենալով, որ տվյալ իրավահարաբերությունները կարգավորող իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ նախկինում կատարված պայմանագրերը համանման (նմանատիպ) համարելիս, դրանք պետք է գնահատել և մեկնաբանել տնտեսական գործունեության նույն խմբերում դասվելու բավարարության տեսանկյունից, քանի որ վերոշարադրյալ իրավակարգավորումները չեն նախատեսում ամբողջությամբ նույնական պայմանագրերի առկայություն: Բացի այդ, պատասխանող կողմի նման գնահատման և մեկնաբանման պայմաններում բացակայում է շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի համապատասխան գնման առարկայի անվանումը,

ինչից ևս հետևում է, որ տնտեսական գործունեության նույն խմբերում դասվելու համար չի պահանջվում ամբողջությամբ նույնական պայմանագրերի առկայություն: Այս կապակցությամբ Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ նախկինում կատարված պայմանագիրը նմանատիպ գնահատելու հակառակ մոտեցման պայմաններում հնարավոր մասնակիցների համար չի ապահովվի մրցակցության հավասար պայմանները, կհանգեցնի գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, այն չի լինի օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվել է տվյալ գնումը:

Նույնանման որոշում կայացվել է նաև 23.07.2018թ.-ի թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/86 որոշմամբ գնում քննող անձի կողմից նշելով՝ բողոք քննող անձը գտնում է, որ նշված պայմանագիրը հանձնաժողովի կողմից պետք է գնահատվեր համանման (նմանատիպ), քանի որ դրա շրջանակներում ընկերության կողմից մատակարարված ապրանքները հանդիսանում են ընթացակարգի հրավերով նախատեսված՝ գնման առարկա հանդիսացող տնտեսական դասվող ապրանքներ (տեխնիկական սարքավորումներ), իսկ ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մասնակիցը հանգել է հիմնավոր հետևության, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աշխատաքնները համարվում են համանման/նմանատիպ/ քանի որ դրա շրջանակում մասնակցի կողմից կատարված աշխատաքները հանդիսանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված՝ գնման առարկա հանդիսացող աշխատանքներ, ինչպես նաև համապատասխանում են հրավերով սահմանված և գնումների պլանով նշված միջանցիկ ծածկագրին՝ CPV (45441160/1), իսկ ծավալը, գնային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Այլ կերպ ասած «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված և նախկինում կատարված պայմանագրերը գնահատվել և մեկնաբանվել է

տնտեսական գործունեության նույն խմբերում դասվելու սկզբունքով, որոնք իրենց բովանդակությամբ ամբողջությամբ համապատասխանում և հանդիսանում են հակակորոզիոն ներկման աշխատանքներ:

Ավելին, ուշագրավ է այն հանգամանքը, որ բողոք բերած անձ «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ն առանց ծանոթանալու գործի նյութերին, անհիմն հայտարարություն է արել, որ «ԻՐԵՆՑ ԿԱՐԾԻՔՈՎ» հաղթող ճանաչված մասնակից ընկերության փորձը չի կարող համարվել փորձ, իսկ աշխատանքը նմանատիպ:

Որևէ ապացույցով չհիմնավորված դիրքորոշումները չեն կարող հիմք հանդիսանալ օրենքի տառին համապատասխան իրականացված գման գործընթացի շրջանակներում կայացված որոշումը անվավեր ճանաչելու համար, ինչն էլ հիմք ընդունելով «Պրոթերմ» ՍՊԸ-ն խնդրել է մերժել «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի բողոքը:

Ի լրումն վերոհիշյալ գրության՝ Պրոթերմ» ՍՊԸ-ն 08.08.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ, «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա.Պարանյանի կողմից 02.08.2018թ. ներկայացվել է բողոքի լրացում, որում նշվել է, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները իբրև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել են կեղծ տվյալներ:

Վերոհիշյալ անձի կողմից չի նշվել, թե ներկայացված տվյալներից որն է կեղծ, և որն է այդ կեղծ տվյալների իրեն հայտնի դառնալու աղբյուրը:

Ոչնչով չհիմնավորված հայտարարությունները ևս մեկ անգամ փաստում են, որ Ա.Պարանյանն արդեն իսկ վստահ է, որ անհիմն բողոք է ներկայացրել, սակայն փորձում է իր անհիմն բողոքը հիմնավորելու համար ներկայացնել նոր չհիմնավորված փաստեր՝ անտեսելով այն հանգամանքը, որ դրանով դիտավորությամբ և գիտակցաբար զրպարտում է «Պրոթերմ» ՍՊԸ-ի ընկերության գործարար համբավը և «Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների պատիվն ու արժանապատվությունը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ պարոն Պարանյանը նաև դիրքորոշում է հայտնել, առ այն, որ «Պրոթերմ» ՍՊ ընկերությունը Հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը ներկայացրել է ոչ թե որակավորման փաստաթղթերը

ներկայացնելու ընձեռած ժամկետում (մինչև 13.07.2018 ժամը 15:00) այլ դրանից հետո (երբ ներկայացվել է բողոք):

Չնայած յուրաքանչյուր անձ, այդ թվում նաև բողոքաբերը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, այնուամենայնիվ ՀՀ գնումները քննող անձի մոտ ներքին համոզմունք ձևավորելու համար, որ բողոքն ակնհայտ անհիմն է, մասնակիցը հայտնել է, որ ներկայացնում է «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից Հրավերով սահմանված կարգով պահանջված փաստաթղթերի ժամանակին ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստից քաղվածք՝ որտեղ ակնհայտ երևվում է, որ ընկերության կողմից 13.07.2018թ. hhrc.gnumner@tna.am էլ. հասցեին ուղարկվել է թվով 4 նամակ: Առաջին նամակը ուղարկվել է 13.07.2018թ. ժամը 11:38 րոպեին, որը եղել է 5-րդ հավելվածը 15 մեգաբայտից ավել ծավալով: Երկրորդ նամակը ուղարկվել է 13.07.2018թ.՝ ժամը 11:40 րոպեին, որը եղել է 5.1 հավելվածը 6 մեգաբայտից ավել ծավալով: Երրորդ նամակն ուղարկվել է 13.07.2018թ. ժամը 12:07 րոպեին, որը եղել է 5.2 հավելվածը 0.15 մեգաբայտից ավել ծավալով: Չորրորդ նամակն ուղարկվել է 13.07.2018թ. ժամը 12:26 րոպեին, որը եղել է 5.2 հավելվածի անհրաժեշտ մյուս փաստաթղթերը 16 մեգաբայտից ավել ծավալով: Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ որակավորման փաստաթղթերը ներկայացրել են սահմանված կարգով և ժամկետում:

«Պրոթերմ» ՍՊԸ-ն ևս մեկ անգամ պնդել է, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Պարանյանը դիտավորությամբ, իրականությանը չհամապատասխանող փաստերի միջոցով գիտակցաբար զրպարտել է «Պրոթերմ» ՍՊԸ-ի գործարար համբավը (տես՝ ՍԴՈ-997, 15.11.2011թ.) կրկին անտեսելով այն հանգամանքը, որ այդ արարքը ՀՀ օրենսդրությամբ արգելված արարք է, ինչին ի պատասխան «Պրոթերմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ եթե բողոքաբերը չներկայացնի իր փաստերը հիմնավորող ապացույցները (որոնք օբյեկտիվ իրականության մեջ գոյություն չունեն, քանի որ որակավորման փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում) «Պրոթերմ» ՍՊԸ-ն ձեռնարկելու է բոլոր հնարավոր օրենսդրությամբ նախատեսված միջոցները, պաշտպանելու «Պրոթերմ» ՍՊԸ-ի բարի համբավը և արժանապատվությունը:

«Պրոթերմ» ՍՊԸ-ն ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 30.07.2018թ. ժամը 10:30-ին և 01.08.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերին:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/78 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/78 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պրոթերմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մետաղական կայմերի և աշտարակների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի 5.2-րդ ենթակետի համաձայն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստին ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում՝ մինչև 13.07.2018թ. ներկայացվել են հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող համապատասխան փաստաթղթերը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նույն արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի 25.07.2018թ. բողոքը և ի լրումն բողոքի ներկայացված գրությունները, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 27.07.2018թ. թիվ 31-419 և 07.08.2018թ. թիվ 31-453 գրությունները և կից փաստաթղթերը, «Պրոթերմ» ՍՊԸ-ի 01.08.2018թ. և 08.08.2018թ. գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրսներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր

կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3)....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 64-րդ կետի 2-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝ աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայ-տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով ***նմանատիպ են համարվում մետաղական կայմերի և աշտարակների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքները:***

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պրոթերմ» ՍՊԸ-ն:

«Պրոթերմ» ՍՊԸ-ն հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի 5.2-րդ ենթակետի համաձայն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստին ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում՝ մինչև 13.07.2018թ. ներկայացվել են հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող համապատասխան փաստաթղթերը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նույն արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպես՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար որպես նմանատիպ պայմանագրեր ներկայացրել է՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 28.04.2017թ. կնքված աղազրկված ջրի պահեստային բաքերի ներքին մակերեսների հակակոռոզիոն շերտի նորոգման աշխատանքների կատարման «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-6/17», «Պրոթերմ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 18.07.2016թ. կնքված էլեկտրական արտադրամասի բաց բաշխիչ սարքավորումների հակակոռոզիոն շերտի նորոգման աշխատանքների կատարման «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-14/16», «Պրոթերմ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 26.05.2017թ. կնքված էլեկտրական արտադրամասի բաց բաշխիչ սարքավորումների հակակոռոզիոն շերտի նորոգման աշխատանքների կատարման «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-30/17», «Պրոթերմ» ՍՊԸ-ի և «Հայաէրոնովիգացիա» ՓԲԸ-ի միջև 16.10.2017թ. կնքված կապալային աշխատանքների կատարման «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-02/17», «Պրոթերմ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 07.03.2017թ. կնքված շոգեգեներատորների իրանի արտաքին մակերեսի և հենակների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքների կատարման «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-7/17», «Պրոթերմ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 14.10.2016թ. կնքված ՀԱԷԿ-ի պարագծի ներքին կենսական կարևոր գոտիներում տեղակայված մետաղական

կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման աշխատանքների կատարման «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-7/17» գնման պայմանագրերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի իմաստով ***նմանատիպ են համարվում մետաղական կայմերի և աշտարակների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքները:***

Ընթացակարգի տեխնիկական բնութագրի համաձայն՝ նախատեսվել է ձեռքբերել «ՀՀՌՑ» ՓԲԸ-ի Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքներ, որոնք պետք է կատարվեն համաձայն Հավելված 1.1՝ ծավալաթերթ-նախահաշվում նշված ծավալների:

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվը, ինչպես նաև դրանք համադրելով «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված պայմանագրերի տեխնիկական բնութագրերով, ծավալաթերթ-նախահաշիվներով նախատեսված աշխատանքների հետ, արձանագրում եմ, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը սույն Ընթացակարգի իմաստով համարվում են նմանատիպ, քանի որ դրանցով նախատեսված

աշխատանքները հանդիսանում են հրավերով նախատեսված աշխատանքների նույն խնբին դասվող: Դրա հետ մեկտեղ՝ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով գնման առարկան նախատեսվել է գնումների պլանով նախատեսված 45441160/1 միջանցիկ (CPV) ծածկագրի տակ, որը նախատեսում է հակակոռուզիոն ծածկույթների կիրառման աշխատանքները: Վերջինս իր հերթին ներառված է «45440000- ներկման և ապակեպատման աշխատանքեր» ծածկագրով դասում, որն էլ իր հերթին դասվում է «45400000- շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ» խմբին: Ուսումնասիրելով «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը գտնում եմ, որ դրանցով նախատեսված աշխատանքները ոչ միայն ներառված են հրավերով նախատեսված տնտեսական գործունեության նույն խմբում, այլև նաև համարվում են նույն դասակարգչի տակ ներառված աշխատանքներ: Հետևաբար գտնում եմ, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը նմանատիպ են և բողոքը սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի այն պնդմանը, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ն չի կարող 5-8 մետր բարձրության վրա կատարած աշխատանքներից հետո իրականացնել նույնը 308 մ բարձրության վրա, ուստի պայմանագրերը չեն կարող համարվել նմանատիպ, գտնում եմ, որ բողոքաբերի նման պնդումն անհիմն է, քանի որ Ընթացակարգի հրավերով որևէ պահանջ նախատեսված չէ աշխատանքների իրականացման բարձրության հետ կապված:

Անդրադառնալով բողոքի երկրորդ հիմքին՝ հայտնում եմ հետևյալը.

Կարգի 64-րդ կետի 2-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝ աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Ընթացակարգի հրավերի 2-րդ կետի 2.5 ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն»համապատասխան վկայականի բնօրինակը և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանք, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են համապատասխան ձևով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում՝ մինչև 13.07.2018թ. ներկայացվել են հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող համապատասխան փաստաթղթերը:

ԳԲԽ-ԱՄ-2018/78 բողոքի քննության շրջանակներում 30.07.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին Պատվիրատուի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել են «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Պրոթերմ» ՍՊԸ-ի՝ որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող՝ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել են հրավերով պահանջվող՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մեջ ներառված՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից հավելված թիվ 5.2-ում նշված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» համապատասխան վկայականի բնօրինակը և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանք, ինչպես նաև

մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Ընդ որում՝ Պատվիրատուն, ինչպես նաև «Պրոթերմ» ՍՊԸ-ն ներկայացրել են համապատասխան էլեկտրոնային փոստից քաղվածքներ, համաձայն որոնց «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 13.07.2018թ. մի քանի էլեկտրոնային նամակ է ուղարկվել գնահատող հանձնաժողովի քարտուղարին, որոնց կցված էին հավելված 5, 5.2-1 (rar), հավելված 5.2, հավելված 5.1:

Ինչ վերաբերում է «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի այն պնդմանը, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի մյուս մասը ներկայացվել է մասնակցին ընտրված ճանաչելու և պայմանագրի կնքման անգործության ժամկետ սահմանելուց հետո, ապա արձանագրում եմ, որ բողոքաբերի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել նման դիրքորոշումը հիմնավորելու համար, ուստի այն անհիմն է:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով նույնպես անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ գործում առկա նյութերի համաձայն «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացվել են հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի 25.07.2018թ. բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի կողմից 25.07.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**